Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

«ԻԿՕՄՕՍ /Հայաստան » հասարակական կազմակերպությունը և «Էրեբունի » պատմահնագիտական արգելոց -թանգարանը հայտարարում են Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման» ծրագրի մեկնարկը՝ ԻԿՕՄՕՍ/Վրաստանի (Վրաստան, գլխավոր գործընկեր), « Architectura I Prestizh» (Ուկրաինա, գործընկեր) և «Riksantikvaren» (Նորվեգիա, գործընկեր) կազմակերպությունների հետ գործընկերությամբ: Ծրագրին աջակցում են Վրաստանում Լեհաստանի դեսպանությունը և Բրիտանական խորհուրդը: Նախագծի մասնակցային գործընկերներն են «Կովկասյան միջավայր» հասարակական կազմակերպությունը (Վրաստան), Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը (Հայաստան) և Հուշարձանների պահպանության գիտահետազոտական ինստիտուտը (Ուկրաինա):

Նախագիծը նախատեսում է գործողություններ 4 հիմնական ուղղություններով՝

1. Ազգային քաղաքականությունների զարգացում հանուն մշակութային ժառանգության . Մշակութային ժառանգության ազգային քաղաքականության նախագծի կազմում Ուկրաինայում և Վրաստանում,

2. Արևելյան գործընկերության տարածաշրջանում ժառանգության սեկտորի շահառուների համար կարողությունների կառուցում . Արևելյան գործընկերության տարածաշրջանի երկրներից շահառուների խմբերի համար մասնագիտական սեմինարների կազմակերպում, մշակութային ժառանգության խրախուսման տարածաշրջանային կենտրոնի հիմնադրում,

3. Տարածաշրջանային մասնագիտական ցանց շակութային ժառանգության պրոֆեսիոնալների Եվրոպական գործընկերության տարածաշրջանային ամուր ցանցի ստեղծում՝ էլեկտրոնային ամսագրի և ֆորումի միջոցով,

4. Հասարակական իրազեկման գործունեություններ Հայաստանում և Վրաստանում հասարակական իրազեկմանն ուղղված արշավներ, հասարակական իրազեկման աստիճանի բարձրացման նպատակով ուղեցույցի մշակում, ուսուցիչների համար օժանդակ ձեռնարկի հարատակում՝ Վրաստանի ևՀայաստանի հանրակրթական դպրոցների համար:

1 / 1